

մեծ փնասներ ըրած կ'ըլլան, վասն զի ան միջոցին որ եւրոպացւոց տղաքը հարկաւոր եղած կրթութիւնը և ուսմունքը սորված են, մերինները հազիւ սկսելու վրայ են:

Յիրաւի հիմա նախապաշարեալներուն թիւը քիչցած է, և մեր տղոց վրայ ալ ան բռնութենէ առաջ եկած վախը քիչ կայ, բայց ինչ օգուտ որ աս համարձակութիւնը աւելի յանկարծական ազատութե մը հետեւանք է, քան թէ աղէկ կրթութեան պատու, որով ինչուան որ մայրերը տան մէջ տղոց կրթութիւն չսկսին տալ անոնց պզտի տարիքէն, մեր ազգը չկրնար եւրոպական ազգաց պէս բարեկիրթ ըլլալ: Արնայ մէկը ըսել թէ ինչպէս կրնան մայրերը իրենց տղոցը կրթութեանը պարապիլ՝ երբ որ իրենք պզտիկուց դպրատանց մէջ կրթութիւն առած չեն: Արաւ է որ ինչուան աղջկանց դպրոցներ չբացուին մեր ազգին մէջ, չենք կրնար մեր փափաքին հասնիլ ինչպէս որ պէտք է. բայց կան այնպիսի բնական բաներ ալ որ ամէն ծնողք գիտեն կամ կրնան գիտնալ. զոր օրինակ մաքրութիւնը ոչ միայն առողջութեան մասն է՝ հապա նաև քաղաքավարութեան. արևելք և արևմուտք գիտեն ծնողք աղտոտութեան ինչ գէշ բան ըլլալը, սակայն կը նային որ Աւրոպացիք մեծ հոգ ունին իրենց զաւկրներուն մաքրութեանը վրայ, իսկ մեր արևելեայք անհոգ են աս բանիս. թէպէտ և հասակաւոր անձինք բաղնիք ստէպ կ'երթան ու կը մաքրուին: Տղոց փողոցներու մէջ խեղութիւն ընելը և գէշ ընկերաց հետ խաղալը ո՞վ չի գիտեր թէ խիստ փնասակար բան է. սակայն շատ ծնողք անհոգութեամբ կը թողուն զաւկրնին որ երթայ փողոցներու մէջ իրեն պատուական օրերը անցընէ, ապագայ երջանկութիւնը և պատիւը փճացընելով: Ո՞ր մայրը արևելք երես տալուն վտանգաւոր բան ըլլալը չի գիտեր. սակայն չեն դադրիր ամէն օր տղոց երեսն 'ի վեր ծիծա-

ղելէն, ինչուան որ տղան գլուխնին ելլէ. ոմանք ալ ասոր ներհակ՝ դահալ պէս կը վարուին զաւկրներնուն հետ. ալ լաւ չէ՝ վայելուչ քաղցրութիւն ու սատկութիւն մը բանեցընելով ըստ տեղւոյն՝ տղան մարդու տեղ գնել ու մարդկութեան ճամբան բերել:

Եւ ընդհանուր սկզբունքները որ երբեմն երբեմն կը գնենք (Խաղամովի պիս մէջ՝ մարց եռանդը վառ պահելու համար է, որ հիմակուրնէ մասնաւոր ջանք ընեն իրենց որդւոցը կրթութեանը, որպէս զի նոր ծննդոց վրայ երևնայ դաստիարակութեան պտուղը. վասն զի թէ որ աղջկանց դպրոցներուն բացուելուն սպասենք՝ գոնէ քսան տարի պէտք է որ իրենց մօրերէն լաւ կրթեալ տղաք տեսնենք: Ինչպէս որ ազգին մեծ մասը ուսմունքները և ճարտարութիւնները առաջ տանելու համար ջանք կը ցուցընէ, հարկ է որ մարք ալ իրենց զաւակացը կրթութեան ջանան, և գիտնան որ ասկէ արդիւնաւոր ու վսեմ բան չեն կրնան ընել. վասն զի ազգի մը փառաց ու երջանկութեան պատճառը, ինչպէս նաև անոր թշուառութեան ու անպատուութեանը՝ ծնողք են իրենց տուած աղէկ կամ գէշ դաստիարակութեամբը:

Հ. Տ. Թ

ԱՅԼԱՅԱՆՈՒԹԻՒՆ

Երեսն:

Ս'ԵՐ ճամբան բոլոր ծաղկրներով զարդարած էր. անոնց վրայ կոխելով գնացինք հասանք սոսկալի ժայռի մը տակ. հոն դիմացնիս մութ այր մը ելաւ. մտանք ներս, կարծէինք որ մէջը ագամորդի մը կը գտնուի: Այլ մըն ալ ինչ կը տեսնես: Ոտքս դռնէն ներս գնելուն պէս՝ բոլոր մարմինս



դող ելաւ , գլխուս մազերը տնկուեցան , կարծես թէ մահը աներեւոյթ ձեռքովը զիս հոն ձգեր էր . սրտիս տաղնապը քանի կ'երթար կ'աւելնար : Սկսայ ես ինծի սիրտ տալ . առաջ երթանք ըսի , տեսնենք ինչ է աս զարհուրեղի բնակարանը : Բաջ գնացի , տեղ մը որ ոչ արև տեսեր է և ոչ հով բանած ունի մէջը . տեսնեմ որ հոն նստեր է Վախանձը , բայց իր կերպարանքը աւելի պզգալի էր քան թէ ահարկու . Դալուկը , Տրտմութիւնն ու Լուսթիւնը քովը նստած էին . Չանձրութիւններն ալ չորս գին կը թռչտէին : Սէյմը մեր վրայ փէց , մէյմը ձեռքը սրտերնուս դրաւ , մէյմը գլխունս զարկաւ , ալ անկէ ետքը մեր տեսածն ալ մտածածն ալ ուրիշ բան չէին բայց եթէ սոսկալի հրէշներ : Բաջ գնացէք առաջ , ո՛վ ողորմելի մարդիկ , ըսաւ մեզի . գնացէք ներսը ինծմէ ալ զօրաւոր աստուածուհի մը տեսէք : Վայեցանք , ուրիշ սարսափելի աստուածուհի մըն ալ անդին կեցած էր , գլխուն վրայ անհամար օձեր կը Ֆշային , և անոնց կրակէ լեզուներուն լուսովը կ'երևնար մեզի իրեն երեսը . անիկայ ալ Վատաղութիւնն էր : Վաշեց օձերուն մէկը փրցուց իր գլխէն ու վրաս նետեց . բռնեմ ըսելուս չմնաց , չեմ գիտեր ինչպէս եղաւ որ սողեցաւ սիրտըս մտաւ : Վիչ մը ատեն թմրեցայ մնացի . բայց երբոր թոյնը սկսաւ երակներուս մէջ քալել , կարծեցի որ դժոխքին մէջն եմ , կարծեցի որ հոգիս բռնկեր է կը վառի , ու մարմնոյս մէջէն դուրս պիտի ցատքէ :

ՄԱՆԹԻՍՔԻՆՕ

ՊԼՏՄՈՒԹԻՆ

Բարեգործութիւն :

Ես տարւոյս սեպտեմբեր ամսոյն սկիզբները Եւրոպայի գաւառէն երիտասարդ մը , որ միտքը գրեթէ Եւրոպայի երթալ կենաց աղէկ վիճակ մը գտնելու համար՝ ուրիշ իրեն հայրենակցացը նման , Փարիզու Սեն-Լէրմէն թաղը գտնուեցաւ . ու աշխատութենէ ու կարօտութենէ հոգին բերանը եկած ըլլալով՝ փողոցին մէջը գետնին վրայ նստաւ . ընկերն ու իրենք զաւկները չորս գին առած , ընկերը ուժ ու արիւնթիւն՝ զաւկներն ալ հաց կ'ուզէին խեղճ երիտասարդէն :

Ես միջոցին արուեստաւոր մը իր աշխատանքի ճերմակ հագուստը վրան՝ ասոնց քովէն կ'անցնէր , ձեռքն ալ թիւթովէ ամանի մը մէջ իր կէսօրուան կերակուրը : Խեղճ տղոցը բերնէն լսելով թէ անթիւ են , կանկ առաւ ու դարձաւ ըսաւ իրենց . « Որդիք , մի լաք ատանկ . քանի որ աղէկ մարդիկ կը գտնուին Փարիզի մէջ անթիւութենէ մեռնող չըլլար . առէք ձեզի աս ապուրն ու պտուղները կերէք , որդիք . ալ մի լաք . մարիկ , դուն ալ կեր ու արիացիր » :

Փողովուրդը աս ազնուասիրտ արուեստաւորին չորս գին առին , ու կը նայէին այն խեղճ ճանապարհորդաց վրայ , որ գտածնին լափելու հետ էին . խել մ'ալ ըստակ անոնց չորս գին թափեցաւ : Իսկ ծեր քահանայ մը արուեստաւորին ձեռքէն բռնեց ու ըսաւ իրեն . « Բարեկամ , հապադուն աս կէսօրը ինչ պիտի ուտես : — Գիտե՞ս ինչ կ'ընեմ , տէր ժողովրդապետ . աս խեղճ մարդիկը միտքս կը բերեմ , փորս լաւ մը կը ճրկմեմ , ու կը սպասեմ որ իրիկուան կերակուրը ուտեմ : — Ինչեւ իրիկուն դեռ չատատեն կայ . առ սըւրիկայ ու քու չափաւոր կերակուրդ ասով հոգա » :